# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ՆՈՐԸՆՏԻՐ ԲԵՆԵԴԻԿՏ ԺԶ ՊԱՊԻՆ

ՀՌՈՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԵՎ ՀՌՈՄԵԱԿԱՆ ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՊ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԲԵՆԵԴԻԿՏ ԺԶ-ԻՆ

Ձերդ Սրբություն, սիրեցյալ եղբայր ի Քրիստոս,

Կիսելով հավատավոր Ձեր հոտի ուրախությունը՝ Մենք, որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս, եղբայրական Մեր սերն ու շնորհավորանքն ենք հղում Ձերդ Սրբությանը, Հռոմի Եպիսկոպոս և Կաթոլիկ Եկեղեցու առաջնորդ ընտրվելու առիթով:

Օրհնյալ է երանաշնորհ Մեր նախորդ Հայրապետների լույս հիշատակը, որոնց նվիրյալ ջանքերի շնորհիվ եղբայրական սերտ համագործակցությունը մեր Եկեղեցիների միջև զգալի առաջընթաց և զարգացում արձանագրեց: Այս առումով նշանակալի վկայություններ էին երջանկահիշատակ Հովհաննես-Պողոս Բ Պապի պատմական այցը Հայաստան և Հայոց ցեղասպանությունը դատապարտող մեր համատեղ հայտարարությունը, որը մխիթարություն եղավ մեր ժողովրդին, հատկապես այս օրերին, երբ ազգովի հիշատակում ենք Մեծ եղեռնի 90-ամյակը:

Սիրեցյալ եղբայր ի Քրիստոս, վստահ ենք, որ Ձեր գահակալության ընթացքում մեր Եկեղեցիների գործակցությունը առավել պիտի զորանա՝ ի բարօրություն մեր հավատացյալների: Մեր աղոթքն է, որ Հարուցյալ Տիրոջ սերը և խաղաղությունը ամենուր և ամենայն ժամ լինեն մեզ հետ՝ մարդկանց սրտերում զորացնելով հավատն առ բարին և հույսը գալիքի հանդեպ:

Այլև հայցում ենք, որ Ամենակարող Աստված պարգևի Ձերդ Սրբությանը քաջառողջություն, ուժ, անսպառ եռանդ և իմաստություն՝ հարանորոգ հաջողություններով և իրագործումներով պսակելով Ձեր նվիրյալ ջանքերը Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու Հովվապետի բարձր ու պատասխանատու առաքելության մեջ:

Եղբայրական սիրով ի Քրիստոս՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
20 ապրիլի 2005 թ.